ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻՊԵՄԶԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«13» ապրիլի 2017 թվական ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ Գ.ԱՆԻՊԵՄԶԱ

№ 29

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ՝ Հ.ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սիմոնյան.

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն, Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիպեմզայի համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 27-ի թիվ 7-Ն որոշումը:

Առդիր «9» թերթ:

Հարգանքով՝

Հ. ԹԱՌԼԱՆՅԱՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ * 06000184 *
ԱՆԻՊԵՄԶԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎՄՈ

Շ. ԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 3829-17
13. 04 17 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻՊԵՄԶԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 7-Ն

«27» ՄԱՐՏԻ 2017 ԹՎԱԿԱՆ ԳՅՈՒՂ ԱՆԻՊԵՄԶԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻՊԵՄԶԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՆԱԽԿԻՆ ԱՆԻՊԵՄԶԱ ԿՈՄԲԻՆԱՏԻ ԿՈՂՄԻՑ ՇԱՀԱԳՈՐԾՎԱԾ ՊԵՄԶԱՆՅՈՒԹԻ ՀԱՆՔԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՕԳՏԱԳՈՐԾԵԼԻ ԵՐԿԱԹԲԵՏՈՆՅԱ ՍԱԼԻԿՆԵՐՆՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 5-րդ և 8-րդ հոդվածների դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիպեմզայի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Համայնքի ղեկավարի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիպեմզայի համայնքի 08-013-0101-0002 կադաստրային ծածկագրով հողամասում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող թվով 180 հատ երկաթբետոնյա սալիկները (միավորի չափերը՝ 2.0 x 2.0 մետր, մակերեսը՝ 4 քառակուսի մետր, հաստությունը՝ 15-20 սանտիմետր) ապամոնտաժել և օտարել աճուրդով:

2. Աճուրդի դրված գույքի ողջ խմբաքանակի համար սահմանել մեկ լոտ:

3. Հիմք ընդունելով որոշման 1-ին կետում նշված գույքի շուկայական արժեքի որոշման վերաբերյալ <<Հովհաննես Գրիգորյան և ընկերներ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության (պետական գրանցման վկայական՝ «17» մարտի 1995թվական, 01Ա N 009838, ՀՎՀՀ 05502742) 2015 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 11/01 գնահատման-զննման ակտը՝ երկաթբետոնյա մեկ սալիկի օտարման մեկնարկային գինը հաստատել 2940 (երկու հազար ինը հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ, ամբողջ խմբաքանակի (լոտի) համար՝ 529 200 (հինգ հարյուր քսանինը հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

4. Սահմանել, որ երկաթբետոնյա սալիկների (հետագայում գույք) ապամոնտաժման աշխատանքներն իրականացվելու են աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի կողմից, որոնց հետ կապված ծախսերը հաշվի են առնվել մետաղական ամրանների շուկայական արժեքի որոշման վերաբերյալ <<Հովհաննես Գրիգորյան և ընկերներ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից կազմված 2015 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 11/01 հաշվետվությունում և ներառվել են սույն որոշման 2-րդ կետով հաստատված գույքի օտարման մեկնարկային գնում:

5. Գույքի ապամոնտաժման աշխատանքների արդյունքում ձեռք բերվող սալիկների հաշվառումն իրականացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիպեմզայի

համայնքի ղեկավարի 2017 թվականի մարտի 26-ի թիվ 4 որոշմամբ ստեղծված հանձնաժողովի միջոցով:

6. Հաստատել աճուրդի կանոնակարգը և աճուրդի մասին հրապարակային ծանուցման հայտարարության տեքստը համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների:

7.Աճուրդը կազմակերպելու նպատակով՝

ա) ստեղծել աճուրդային հանձնաժողով հետևյալ անհատական կազմով՝

*հանձնաժողովի նախագահ՝*

Հարություն Թառլանյան - համայնքի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

Արթուր Խաչատրյան - համայնքի ավագանու անդամ,

Հասմիկ Նազարյան - համայնքի ավագանու անդամ,

Արսեն Դավթյան - գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ,

Ցոլակ Գևորգյան - գյուղապետարանի աշխատակազմի համակարգչային օպերատոր,

բ) աճուրդավար հաստատել հանձնաժողովի անդամ, գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ՝ Արսեն Դավթյանին:

8. <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն հանձնաժողովին օժտել հրապարակային սակարկություն կազմակերպելու լիազորություններով (աճուրդի կազմակերպիչ):

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | Կողմ-5 | Դեմ-0 | Ձեռնպահ-0 |
|---|---|---|---|
| ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝ | կողմ | | |
| ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՅԱՆ՝ | կողմ | | |
| ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ | կողմ | | |
| ՀԱՍՄԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ՝ | կողմ | | |
| ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝ | կողմ | | |

ԱՆԻՊԵՄԶԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹԱՌԼԱՆՅԱՆ

«27» մարտի 2017 թվական
գյուղ Անիպեմզա

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անիպեմզայի համայնքի ավագանու 2017 թվականի
մարտի 27-ի թիվ 7-Ն որոշման

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻՊԵՄԶԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՆԱԽԿԻՆ ԱՆԻՊԵՄԶԱ ԿՈՄԲԻՆԱՏԻ ԿՈՂՄԻՑ ՇԱՀԱԳՈՐԾՎԱԾ ՊԵՄԶԱՆՅՈՒԹԻ ՀԱՆՔԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՕԳՏԱԳՈՐԾԵԼԻ ԵՐԿԱԹԲԵՏՈՆՅԱ ՍԱԼԻԿՆԵԻ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիպեմզայի համայնքի սեփականությունը հանդիսացող, նախկին անիպեմզա կոմբինատի կողմից շահագործված պեմզանյութի հանքավայրում գտնվող անօգտագործելի երկաթբետոնյա սալիկներնը աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին

1.Սույն կանոնակարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիպեմզայի համայնքի 08-013-0101-0002 կադաստրային ծածկագրով հողամասում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող թվով 180 հատ երկաթբետոնյա սալիկների (միավորի չափսերը՝ 2.0 x 2.0 մետր, մակերեսը՝ 4 քառակուսի մետր, հաստությունը՝ 15-20 սանտիմետր) աճուրդի միջոցով օտարման աճուրդային հանձնաժողովի գործունեության կանոնները:

2. Աճուրդի կազմակերպիչ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիպեմզայի համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները՝ ի դեմս համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիպեմզայի համայնքի սեփականությունը հանդիսացող, նախկին Անիպեմզա կոմբինատի կողմից շահագործված պեմզանյութի հանքավայրում գտնվող անօգտագործելի երկաթբետոնյա սալիկներն աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին>> 7-Ն որոշմամբ ստեղծված աճուրդային հանձնաժողովը՝ հետևյալ անհատական կազմով՝

*հանձնաժողովի նախագահ՝*

Հարություն Թառլանյան - համայնքի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

Արսեն Դավթյան - գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ,

Արթուր Խաչատրյան - համայնքի ավագանու անդամ,

Գևորգ Հարությունյան - համայնքի ավագանու անդամ,

Հասմիկ Նազարյան - համայնքի ավագանու անդամ,

3.Հանձնաժողովը ղեկավարվում է <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիպեմզայի համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիպեմզայի համայնքի սեփականությունը

հանդիսացող, նախկին Անիպեմզա կոմբինատի կողմից շահագործված պեմզանյութի հանքավայրում գտնվող անօգտագործելի երկաթբետոնյա սալիկներն աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին>> 7-Ն որոշմամբ, սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով:

## II. ԱՃՈՒՐԴԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Աճուրդը անցկացնել սակարկությունների ձևով, որի ընթացքում հաղթող ճանաչել այն մասնակցին, որն աճուրդի դրված գույքի համար առաջարկել է առավելագույն բարձր գին:

5. Աճուրդը անցկացնել 2016 թվականի ապրիլի 29-ին, ժամը 12[00]-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիպեմզա գյուղում՝ գյուղապետարանի շենքում:

6. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը հրապարակել նվազագույնը 2000 տպաքանակ ունեցող մամուլում և (կամ) http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ աճուրդի կայացման օրվանից առնվազն 30 օր առաջ:

7. Աճուրդի հրապարակային ծանուցման մասին հայտարարությունը աճուրդի անցկացման վայրում և համայնքի մարդաշատ այլ վայրերում տեղադրել աճուրդի կայացման օրվանից առնվազն 30 օր առաջ: Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը՝ աճուրդի կայացման օրվանից առնվազն մեկ օր առաջ տեղադրվում է աճուրդի կայացման վայրում ցուցատախտակի վրա:

8. Հրապարակային սակարկությունների մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները:

9. Հրապարակային սակարկություններին չեն կարող մասնակցել՝

1/ աճուրդային հանձնաժողովի անդամները /աճուրդի կազմակերպիչ/,

2/ համայնքի ավագանու անդամները,

3/ աճուրդավարի երեխաները, ծնողները, ամուսինը, տատը, պապը, եղբայրները և քույրերը, ինչպես նաև աճուրդավարի ամուսնու ծնողները, տատը, պապը, եղբայրները և քույրերը:

10. Աճուրդի մասնակցության վճարի չափը սահմանված է 2000 /երկու հազար/ դրամ:

11. Աճուրդին կարող են ներկա գտնվել աճուրդի մասնակից չհամարվող այլ անձինք, ովքեր վճարել են մուտքի տոմսի վճարը:

12. Աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար մուտքի տոմսի վճարը սահմանվում է 1000 /մեկ հազար/ դրամ:

12. Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձիք (Դիտորդ), աճուրդի դահլիճում զբաղեցնում են առանձին տեղեր:

13. Աճուրդի մասնակիցները և դիտորդները պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանը և հետևել հետևյալ կանոններին՝

1) չհայտնել իրենց դժգոհությունը որևէ մասնակցի, մասնակից չհամարվող անձի, աճուրդային հանձնաժողովի կամ աճուրդավարի նկատմամբ,

2) չխոսել աճուրդի ընթացքում, բացառությամբ սույն պայմաններով սահմանված դեպքերի,

3) հարցադրումներ ուղղել աճուրդային հանձնաժողովի նախագահին լոտի աճուրդը սկսվելուց առաջ կամ հետո, իսկ լոտի աճուրդի ընթացքում միայն աճուրդավարի թույլտվությամբ,

4) աճուրդի ընթացքում դուրս չգալ դահլիճից կամ չվերադառնալ դահլիճ՝ բացառությամբ ընդհանուր աճուրդի դեպքում լոտերի աճուրդների միջև ընկած ժամանակահատվածի՝ աճուրդավարի թույտվությամբ,

5) չթաքցնել աճուրդավարի կամ նրա ամուսնու ազգական լինելու հանգամանքը:

14. Աճուրդի դրված գույքի մեկնարկային գինը հաստատված է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիպեմզայի համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիպեմզայի համայնքի սեփականությունը հանդիսացող, նախկին Անիպեմզա կոմբինատի կողմից շահագործված պեմզանյութի հանքավայրում գտնվող անօգտագործելի երկաթբետոնյա սալիկներն աճուրդով օտարելու, օտարման մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին>> թիվ 7-Ն որոշմամբ, համաձայն որի՝ աճուրդի դրված գույքի 1 միավորի մեկնարկային գինը սահմանված է 2940 (երկու հազար ինը հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ, 180 միավոր գույքի համար՝ 529200 (հինգ հարյուր քսանինը հազար երկու հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, գույքի ողջ խմբաքանակը համարվում է մեկ լոտ:

15. Երկաթբետոնյա սալիկների ապամոնտաժման աշխատանքներն իրականացվելու են մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի կողմից, որոնց հետ կապված ծախսերը հաշվի են առնվել մետաղական ամրանների շուկայական արժեքը որոշելիս և օտարման մեկնարկային գինը հաստատելիս (հիմք՝ <<Հովհաննես Գրիգորյան և ընկերներ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից կազմված 2015 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 11/01 հաշվետվությունը):

16. Աճուրդի մասնակցի համար գնային առաջարկի նվազագույն հավելման չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

17. Աճուրդի նախավճարի չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով, գումարով՝ 26 460 (քսանվեց հազար չորս հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ, որի վճարումից հետո աճուրդի մասնակցին տրամադրվում է <<Աճուրդի մասնակցի վկայական>>:

18. Աճուրդի կանխավճարը և մուտքի վճարը վճարվում են աճուրդի կազմակերպչին:

19. Աճուրդում հաղթած է համարվում աճուրդի այն մասնակիցը, ով աճուրդավարի մուրճիկի երրորդ հատվածից հետո ներկայացրել է ամենաբարձր գնային հայտ:

20. Աճուրդի դրված գույքի ուսումնասիրման համար ժամկետ է սահմանվում 2017 թվականի ապրիլի 1-ից մինչև ապրիլի 28-ը՝ ժամը 9:00-ից մինչև 15:00-ն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիպեմզա գյուղում:

21. Աճուրդի կանոնակարգին ծանոթացումը և լուսապատճեի տրամադրումը կատարվում է Անիպեմզայի գյուղապետարանում՝ 2017 թվականի ապրիլի 1-ից մինչև ապրիլի 28-ը՝ ժամը $9^{00}$-ից մինչև $15^{00}$-ն:

22. Աճուրդը սկսվելուց մեկ ժամ առաջ աճուրդային հանձնաժողովը (աճուրդի կազմակերպիչ) իր նիստում գրանցում է աճուրդի մասնակիցներին՝ ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը և իր որոշմամբ թույլատրում է մասնակցել աճուրդին:

23. Աճուրդի արդյունքների մասին աճուրդի անցկացնելու օրը կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են՝ աճուրդային հանձնաժողովի ներկա անդամները և աճուրդի հաղթող մասնակիցը:

24. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ արձանագրության ստորագրման պահից նրան են անցնում համապատասխան գույքի վերաբերյալ առք ու վաճառքի մասին պայմանագիր կնքելու իրավունքը:

25. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ առք ու վաճառքի պայմանագիրը կնքվում է աճուրդի կայացման օրվանից հետո 10-օրյա ժամկետում:

26. Գույքի ամբողջ գնի վճարումը կատարվում է գնորդի կողմից երկաթբետոնյա սալիկներն ապամոնտաժելու աշխատանքներն ավարտելուց և Անիպեմզայի գյուղապետարանի համապատասխան հանձնաժողովի կողմից գույքի քանակի վերաբերյալ համապատասխան արձանագրություն կազմելուց հետո 10-օրյա ժամկետում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը:

27. Սահմանված ժամկետներում առք ու վաճառքի պայանագիրը չկնքելու և /կամ/ գույքի գինը չվճարելու դեպքում վճարված նախավճարը չի վերադարձվում և փոխանցվում է համայնքի բյուջե:

28. Գույքի առք ու վաճառքի նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի կողմից:

29. Աճուրդը կայանալու կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում աճուրդում չհաղթած մասնակցին վերադարձվում է նախավճարը:

30. Աճուրդի մասնակցության հայտերն ընդունվում են Անիպեմզայի գյուղապետարանում աճուրդային հանձնաժողովի կողմից 2017 թվականի ապրիլի 1-ից մինչև ապրիլի 28-ը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը՝ 10:00-ից մինչև 15:00-ն:

31. Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են՝

1) հայտ՝ սահմանված ձևանմուշով,

2) ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճեն,

3) իրավաբանական անձանց և համայնքների համար՝ ձեռնարկության հիմնադիր փաստաթղթերի պատճենները և ներկայացուցչի լիազորությունը հաստատող փաստաթուղթը,

4) նախավճարի մուծման անդորրագիրը:

32. Աճուրդային հանձնաժողովը աճուրդի արդյունքների վերաբերյալ կազմված եզրակացությունը մեկ օրվա ընթացքում ներկայացնում է համայնքի ղեկավարին:

33.Աճուրդում վաճառված գույքի նկատմամբ իրավունքները պետական գրանցման ենթակա չեն:

34. Աճուրդը համարվում է չկայացած եթե.

1) Աճուրդին ներկայացել է միայն մեկ գնորդ կամ չի ներկայացել որևէ գնորդ:

2) աճուրդի ընթացքում վաճառվող գույքի նախնական գնի հավելում չի կատարվել:

3) աճուրդում հաղթած անձը չի մուծել գնման գինը:

35. Աճուրդը հայտարարվում է չկայացած աճուրդային հանձնաժողովի որոշմամբ՝ ոչ ուշ քան նշված հանգամանքները ի հայտ գալու հաջորդ օրը:

36. Աճուրդը չկայանալու կամ անվավեր ճանաչվելու դեպքում կրկնական աճուրդը կազմակերպում և անցկացնում է չկայացած աճուրդից ոչ ուշ քան մեկ ամիս հետո: Կրկնական աճուրդը կազմակերպում և անցկացնում է աճուրդային հանձնաժողովը՝ սույն կանոնակարգի և /կամ/ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով:

37. Վերոհիշյալ կանոնների խախտմամբ անցկացված աճուրդը շահագրգիռ անձի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր: Աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:

38. Աճուրդի մասնակիցների մասին տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

## III . ԱՃՈՒՐԴԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

39. Աճուրդային հանձնաժողովը իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

40. Նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների սահմանված թվի կեսից ավելին:

41. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են, եթե դրանց օգտին քվեարկել է նիստին մասնակցած հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

42. Աճուրդավարը հաստատվում է աճուրդային հանձնաժողովի անդամների կազմից՝ աճուրդային հանձնաժողովի որոշմամբ:

43. Աճուրդային հանձնաժողովը դադարեցնում է իր լիազորությունները՝ աճուրդը կայացած ճանաչվելու, աճուրդի կայացման մասին արձանագրությունը ստորագրելու և

համայնքի ղեկավարին աճուրդի արդյունքների վերաբերյալ համապատասխան եզրակացություն ներկայացնելուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԹԱՌԼԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անիպեմզայի համայնքի ավագանու
2017 թվականի մարտի 27-ի թիվ 7-Ն որոշման

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻՊԵՄԶԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՆԱԽԿԻՆ ԱՆԻՊԵՄԶԱ ԿՈՄԲԻՆԱՏԻ ԿՈՂՄԻՑ ՇԱՀԱԳՈՐԾՎԱԾ ՊԵՄԶԱՆՅՈՒԹԻ ՀԱՆՔԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՕԳՏԱԳՈՐԾԵԼԻ ԵՐԿԱԹԲԵՏՈՆՅԱ ՍԱԼԻԿՆԵԻ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ

*1. Աճուրդի անցկացման ժամկետը՝* 2017 թվականի ապրիլի 29-ին, ժամը 12-00-ին:

*2. Աճուրդի կազմակերպիչը՝* Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիպեմզայի գյուղապետարան:

*3. Աճուրդի կազմակերպման վայրը /հասցեն/՝* Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, գյուղ Անիպեմզա, 1-ին փողոց շենք 7 /Անիպեմզայի գյուղապետարանի շենք/:

*4. Աճուրդի ձևը և անցկացման կարգը՝* Հրապարակային սակարկությունների ձև, որի ընթացքում հաղթող է ճանաչվում աճուրդի այն մասնակիցը, որը աճուրդի դրված գույքի համար առաջարկել է առավել բարձր գին:

*5. Լոտերի քանակը՝* 1 (մեկ):

| *Գույքի անվանումը* | *Գույքի սեփակա-նատերը* | *Գույքի նկարագրությունը, տեխնիկական տվյալները և պայմանները* | *Գույքի տեխնիկական վիճակի նկարագրու-թյունը* | *Մեկնարկա-յին գինը /դրամ/* |
|---|---|---|---|---|
| Երկաթ-բետոնյա հատակի սալիկներ | ՀՀ Շիրակի մարզի Անիպեմզա համայնք | ***Գույքի նկարագրությունը***<br>Երկաթբետոնյա սալիկներ, որոնք Անիպեմզայի նախկին կոմբինատի կողմից օգտագործվել են որպես պեմզանյութի հանքավայր տանող ճանապարհ և տեխնիկական միջոցների կայանատեղի:<br>***Տեխնիկական տվյալները***<br>Կառուցման տարեթիվը -1975-1980թվականներ<br>Արտաքին չափերը- 2.0x2.0 մետր<br>Հաստությունը-15-20 սանտիմետր<br>Մակերեսը – 4 քառակուսի մետր<br>Քանակը- 180 հատ:<br>***Պայմանները***<br>Երկաթբետոնյա սալիկների ապամոնտաժման աշխատանքներն իրականացվելու են աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի կողմից, որոնց հետ կապված ծախսերը հաշվի են առնված գույքի օտարման մեկնարկային գնում: | Երկարատև շահագործման և բաց կարգավիճակի հետևանքով սալիկները գտնվում են քայքայված և կոտրտված վիճակում: | 529 200 (հինգ հարյուր քսանինը հազար երկու հարյուր) |

6. Աճուրդի պայմանները՝

1) Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական և իրավաբանական անձինք և համայնքները:

2) Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են՝

ա/հայտ՝ սահմանված ձևանմուշով,

բ/ֆիզիկական անձանց համար՝ անձնագրի պատճեն,

գ/իրավաբանական անձանց և համայնքների համար՝ ձեռնարկության հիմնադիր

փաստաթղթերի պատճեները և ներկայացուցչի լիազորությունը հաստատող փաստաթուղթը,

դ/ նախավճարի մուծման անդորրագիրը:

3 Աճուրդի մասնակցության հայտերն ընդունվում են Անիպեմզայի գյուղապետարանում աճուրդային հանձնաժողովի կողմից 2017 թվականի ապրիլի 1-ից մինչև ապրիլի 28-ը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը՝ 10:00-ից մինչև 15:00-ն:

4) Աճուրդի մասնակցի համար գնային առաջարկի նվազագույն չափը սահմանվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

5) Աճուրդի մասնակցության վճարի չափը սահմանված է 2000 /երկու հազար/ դրամ:

6) Աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար մուտքի տոմսի վճարը սահմանված է 1000 /մեկ հազար/ դրամ:

7)Աճուրդում հաղթած է համարվում այն մասնակիցը, ով աճուրդի դրված գույքի համար ներկայացրել է ամենաբարձր գնային հայտ:

8) Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցի հետ առք ու վաճառքի պայմանագիրը կնքվում է աճուրդի կայացման օրվանից հետո 10-օրյա ժամկետում:

9) Գույքի ամբողջ գնի վճարումը կատարվում է երկաթբետոնյա սալիկներն ապամոնտաժելու, աշխատանքներն ավարտելուց և Անիպեմզայի գյուղապետարանի հանձնաժողովի կողմից գույքի քանակի վերաբերյալ համապատասխան արձանագրություն կազմելուց հետո 10-օրյա ժամկետում:

9) Աճուրդի կանոնակարգին ծանոթացումը և լուսապատճեի տրամադրումը կատարվում է Անիպեմզայի գյուղապետարանում՝ 2017 թվականի ապրիլի 1-ից մինչև ապրիլի 28-ը՝ ժամը $9^{00}$-ից մինչև $15^{00}$-ն:

10) Աճուրդի դրված գույքի ուսումնասիրման համար ժամկետներ սահմանվում են 2017 թվականի ապրիլի 1-ից մինչև ապրիլի 28-ը՝ ժամը 9:00-ից մինչև15:00-ն՝ Անիպեմզա գյուղում:

11) Աճուրդը կայանալու կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում աճուրդում չհաղթած մասնակցին վերադարձվում է նախավճարը:

12) Վճարումները կատարվում են Անիպեմզայի գյուղապետարանում՝ աճուրդային հանձնաժողովին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԹԱՌԼԱՆՅԱՆ